ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80,
կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№_____ առ “ ” ____ 2022թ.

Ձեր №_____ առ “ ” ____ 2022թ

«ՌՎ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊԸ տնօրեն
տիկին Ռ. Վարդանովային

[ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-164/21-01/289 պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ]

Հարգելի՛ տիկին Վարդանովա,

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար «սողնակներ» ապրանքների (այսուհետ՝ ապրանք) ձեռքբերման նպատակով 2021թ սեպտեմբերի 30-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-164/21» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «ՌՎ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊԸ-ի միջև, 2021թ. նոյեմբերի 8-ին կնքվել է №ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-164/21-01/289 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 537.000 (հինգ հարյուր երեսունյոթ հազար) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գնով: Պայմանագրով նախատեսված թվով 7 հատ 30c41нж տիպի սողնակը «ՌՎ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊԸ-ի կողմից չեն մատակարարվել:

Համաձայն վերոհիշյալ Պայմանագրի

- Հավելված №1-ի՝ «Վաճառողը պարտավոր է մատակարարումը իրականացնել Պայմանագրի կնքման օրվանից 45 օրացուցային օրվա ընթացքում»:
  Հիմք ընդունելով հիշյալ պայմանագրի 2.1 կետը, այն է՝ գնորդը իրավունք ունի՝
- 2.1.1 ապրանքը սահմանված ժամկետում վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի;
- 2.1.7 միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե էականորեն խախտվել է Պայմանագիրը;
- 2.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտվել էական է համարվում, եթե՝
  բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «ՌՎ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊԸ-ի հետ 2021թ. նոյեմբերի 8-ին կնքած №ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-164/21-01/289 պայմանագիրը:

Հայտնում ենք նաև, որ չմատակարարված ապրանքների մասով Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվեն նաև պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժերը և տուգանքները:

Հարգանքով՝

Գլխավոր տնօրեն **Է. Ա. Մարտիրոսյան**

Կազմեց՝
ԳԲ 2-րդ կարգի մասնագետ՝
Գ. Մարկոսյան
Հեռ. 010-28-29-60, 33-08